

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ  
Լրացուցիչ կրթական ծառայության պայմանագիր  
Լոդ, հեծանիվ

2016թ. Բ. Երևան

### Ընդհանուր դրույթներ

Լրացուցիչ կրթական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքում են ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կրթահամալիր) Հիմնական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) ..... դասարանի սովորողը ..... (այսուհետ՝ Սովորող), Սովորողի օրինական ներկայացուցիչը ..... (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) և Դպրոցի ղեկավարը (այսուհետ՝ Ղեկավար) Շամիրամ Պողոսյանը Սովորողին լրացուցիչ կրթական ծառայություն մատուցելու մասին: Պայմանագիրը նախատեսված է Հանրակրթության մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), Կրթահամալիրի զարգացման ծրագրով, կանոնադրությամբ:

### Պայմանագրի առարկան

Պայմանագրի առարկան սովորողի նախասիրությունները և հետքրքրությունները բավարարելու նպատակով Ծառայության իրականացումն է: Ծառայության բովանդակությունն է (այսուհետ՝ Բովանդակություն).  
Լոդի, հեծանիվի ուսուցումը որպես հանրակրթության լրացում:

### Կողմերի պարտականությունները և իրավունքները

Սովորողը պարտավոր է.

- մասնակցել Բովանդակությամբ որոշված բոլոր պարապմունքներին և չուշանալ դրանցից.
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել.
- անկանխատեսելի բացակայելու կամ ուշանալու դեպքում տեղեկացնել դասավանդողին:

Սովորողն իրավունք ունի.

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն.
- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու:

### Օրինական ներկայացուցիչը պարտավոր է.

ապահովել Սովորողի մասնակցությունը պարապմունքներին

- Սովորողին ապահովել անհրաժեշտ գործիքներով, պիտույքներով, գրականությամբ, հագուստով
- Ժամանակին կատարել պայմանագրով որոշված վճարումները:

### Օրինական ներկայացուցիչը իրավունք ունի.

- մասնակցելու Բովանդակությունը կազմելուն

- Բովանդակությունում փոփոխություն առաջարկելու
- Ժամանակից շուտ լուծելու պայմանագիրը՝ նշելով պատճառները:

### Ղասավանդողը (մարզիչը) պարտավոր է.

- չուշանալ պարապմունքներից
- պարապմունքի ժամանակը այլ նպատակով չօգտագործել
- կատարել սովորողի հաշվառում
- ապահովել Բովանդակության իրականացումը
- Օրինական ներկայացուցչին և Ղեկավարին պարբերաբար տեղեկացնել սովորողի գործունեության մասին

### Պայմանագրի գինը

1. Ստացած Ծառայության համար Օրինական ներկայացուցիչը պարտավորվում է Կրթահամալիրի հաշվարկային հաշվին տարեկան փոխանցել 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ, վճարումները սահմանված կարգով անել փոխանցումով՝ կիսամյակային՝ մինչև սեպտեմբերի 5-ը և մինչև փետրվարի 5-ը, կամ ամսական՝ վճարելով 2000 (երկու հազար ) ՀՀ դրամ. ամսական վճարման դեպքում վճարումը կատարել մինչև տրված ամսվա 5-ը՝ այն հաշվով, որ առաջին հինգ ամիսների համար վճարումը կատարված լինի մինչև դեկտեմբերի 20-ը, իսկ երկրորդ հինգ ամիսների համար՝ մինչև մայիսի 20-ը:
2. Ոչ լրիվ ուսումնական տարվա դեպքում ստացած կրթական ծառայությունների վճարը հաշվարկվում է ամիսը 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

### Պայմանագրի լուծման հիմքերը

Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.

- 1) Օրինական ներկայացուցչի և Սովորողի նախաձեռնությամբ, երբ դժգոհ են մատուցված Ծառայությունից:
- 2) Ղեկավարի նախաձեռնությամբ՝ երբ Օրինական ներկայացուցիչը կամ սովորողը չի կատարում պայմանագրով որոշված պարտականությունները:
- 3) այլ դեպքերում:

Որևէ հիմքով պայմանագիրը լուծարելու դեպքում արդեն մուծված գումարը չի վերադարձվում:

Պայմանագիրը գործում է մինչև \_\_\_\_\_ **հունիսի 30** :

### Կողմերի ստորագրությունները

Սովորողի օրինական ներկայացուցիչ՝

**անուն, ազգանուն**

Դպրոցի ղեկավար՝

**Շամիրամ Պողոսյան**